

զերը ամէն կողմ տարածուելով, կը թուլատրէին մարդու մը արեւնակ (bélvédère) շինելու: Գրեթէ Զատիկ օրերուն բացուած տերեւներուն պատճառաւ մէկը կըրնար յուսալ թէ ոչ ոք կրնար տեսնել զինքը: 570ին տակաւին կը պատուէին այս ծառը, որ այլևս չօրցած էր: Իսկ զալով Զաքէոսի տան՝ ուր Յիսուս հրաւիրուեցաւ, առաւելապէս կը փնտռուի մօտը այն ճանապարհին որ Յորդանանի ծանծաղուտէն երթալով՝ Երիքովի մէջէն Երուսաղէմ կը տանի (Dal. էջ 317-319):

6. Զաֆեոսի իւղը. — Երիքովի մէջ տեսակ մը թուփ կայ որ կը կոչուի *balanites aegyptiaca*, կամ Յովսէփի *myrobolanum* կոչուած՝ որ խոշոր ձիթապտուղի չափ պտուղներ կուտայ: Տեղացիները այս բոյսը կը կոչեն Զաֆեոս, և անոր պտուղին կուտերէն կը հանեն իւղ մը վէրքերու բժշկութեան գործածելու համար ու կը ծախեն զայն ուխտաւորներուն՝ Զաֆի իւղ անուամբ:

Երիքովի վանականները Զաքեոսմը՝ *Balanites Aegyptiaca* կը նկատէին իբր Գաղաազի բալասան: Անոր պլտուղէն կը պատրաստէին իւղոտ խէժ մը զոր ուխտաւորներուն կը վաճառէին իբր Գաղաազի իւղ: Կ'ըսուի թէ օգտակար է, վէրքերու եւ պալարներու դարմանումի համար (Has. Ա. հատ. էջ 236):

7. Երիքովի աւանդութիւնները. — Շատ կանուխէն Երիքովը եպիսկոպոսական աթոռ մըն էր. անոր առաջին եպիսկոպոսը՝ Ժանվիէ, ներկայ էր Նիկիոյ ժողովին (325) եւ վերջինը՝ Գրիգոր, մասնակցեցաւ Երուսաղէմի Սինոդին (536):

Զանազան երկիրներէ քրիստոնեաներ եկան հաս-